ՆՈՐ ԳՐՔԵՐ

Ռ. Հ. Եաչատրյան — Արտասահմանի հայ կոմունիստական մամուլի պատմությունից. Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչություն, 1960, 152 էջ, գինը՝ 59 կոպ.։

Հեղինակը հենվելով բուլղարական Կոմունիստական պարտիայի կենտրոնական պարտիական արխիվում հայտնաբերած նոր նյութերի վրա, ցույց է տալիս բուլղարահայ կոմունիստական մամուլի ձևավորման գաղափարական և կազմակերպչական նախադրյալները, վեր է հանում «Կարմիր լուրերը» արտասահմանյան առաջին հայ կոմունիստական թերթի կատարած աշխատանքը, նրա նշանակությունը։

Ուսումնասիրությունը նվիրված է «Կարմիր լուրերը» թերթի առաջին համարի լույս ընծայման 40-ամյակին։

Վ. Ղ. Սեյան — Ընդդեմ ռևիզիոնիզմի պետության հարցում. Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչություն, 1960, 122 էջ, գինը՝ 27 կոպ.

Սույն գրքույկով Հայկական ՍՍՌ ԳԱ Փիլիսոփայության և իրավունքի սեկտորը սկիզբ է դնում «Ընդդեմ բուրժուական գաղափարախոսության» մատենաշարին։

Գրքույկում քննության է առնվում մարքսիզմ-լենինիզմի ուսմունքի և ռևիզիոնիզմի արմատական հակադրությունը՝ ընդհանրապես պետության և մասնավորապես իմպերիալիստական բուրժուազիայի՝ պետության ու դեմոկրատիայի բնույթի ըմբռնման հարցում, ինչպես և կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու ժամանակաշրջանում պրոլետարիատի դիկտատուրայի անհրաժեշտության, սոցիալիստական պետության սիստեմում մարքսիստական-լենինյան պարտիայի ղեկավար, ուղղություն տվող դերի և սոցիալիստական պետության հարցերը։ Պետության հարցում ռևիզիոնիզմի հայացքների քննադատությունը առավել լրիվ դարձնելու նպատակով հեղինակը պատշաճ տեղ է հատկացրել նաև սոցիալ-դեմոկրատների ռեֆորմիզմի տեսական դրույթների մերկացմանը։

Ն Ո Ր Դ Ր Ք Ե Ր

Հ. Մ. Եզանյան—Գյուղացիության վիճակը ժամանակակից Իրանում. Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչություն, 1960, 106 էջ, գին՝ 25 կոպ.։

Սույն աշխատությունը հանդիսանում է Հայկական ՍՍՌ ԳԱ Արևելագիտության սեկտորի սկզբնավորած «Մերձավոր և Միջին արևելքի երկրների պատմություն» մատենաշարի առաջին գիրքը։

Նրանում հանգամանորեն նկարագրվում է ժամանակակից Իրանի գյուղացիության ֆեոդալական դաժան շահագործումն ու ծայրահեղ աղքատությունը։ Իրանական և օտարերկրյա բազմաթիվ աղբյուրներից քաղված փաստական նյութերի հիման վրա ցույց է տրված Իրանի բնակչության ավելի քան 80%-ը կազմող գյուղացիության քաղաքական իրավազրկությունը և սոցիալական անապահով վիճակը։

Վ. Ա. Գևորգյան—Շինարարության ինքնարժեքի իջեցումը. Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչություն. 1960. 89 էջ, գին՝ 22 կոպ.։

Հայկական ՍՍՌ Տնտեսագիտության ինստիտուտի հրատարակած այս գրքույկում լուսաբանվում է Հայկական ՍՍՌ-ում բնակարանային շինարարության արժեքի իջեցման հիմնական գործոնները։

Այն գործնական նշանակություն ունի շինարարական կազմակերպությունների պլանային, ֆինանսական. ինժեներա-տեխնիկական և մյուս աշխատողների համար։

Սառածանի. Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչություն, 1960, 398 էջ, գին՝ 1 ռ 20 կ.։

«Սառածանի» խորագիրը կրող այդ ժողովածուն բաղկացած է ընդարձակ «Ներածություն»-ից (հեղինակ Ա. Տ. Ղանալանյան), ուր հանգամանորեն վերլուծված է հայ ժողովրդական առածների բովանդակությունը և արվեստը, և առածների ժողովածուից, որտեղ առանձին գլուխների մեջ տարբեր խմբավորմամբ ի մի են հավաքված հազարավոր առած-ասացվածքներ, իրենց բազմաթիվ նմանակներով ու տարբերակներով։ Հատորն ունի նաև մանրամասն առարկայական. թեմատիկ ու անվանական ուղեցույց-ցանկեր և աղբյուրների ու տեղանունների համառոտագրություններ։